

ԱՐՄԻՆ ՎԵՂՆԵՐԸ՝ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՄՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՎԱՆԱՏԵՍ*

Անուշ Դոլուխանյան

Երբ ետ ես նայում, ամեն ինչ վերակենդանանում է...

Ա. Վեզներ

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Օսմանյան կայսրությունում մարդկության պատմության մեջ տեղի ունեցած մեծագույն ողբերգությունը՝ հայ ժողովրդի մասսայական ոչնչացումը, խոր հետք թողեց ոչ միայն պատմության, այլ նաև գրականության մեջ:

Ներգրավելով փաստացի մեծածավալ նյութեր՝ հայոց ցեղասպանության պատմությունն իր արտացոլումն է գտել նաև գերմանական գրականության մեջ՝ հատկապես Հայկական հարցի արդարացի լուծմանը հավատարիմ այնպիսի գրողների շնորհիվ, ինչպիսիք են Ի. Լեպսիուսը, Պ. Ռորբախը, Ա. Վեզները և այլք: Այս հեղինակների գրքերն ու հրապարակային ելույթները մեծ արձագանք գտան գերմանական առաջադեմ մտավորականության շրջանում և պատահական չէ, որ, երբ 1914թ. Բեռլինում ստեղծվեց Հայ-գերմանական միությունը, նրա կազմում ընդգրկվեցին գրականության և արվեստի ավելի քան ութսուն ներկայացուցիչներ՝ Գ. Զուդերման, Թ. Մանն, Ռ. Դեմել, Լ. Մանցել, Մ. Լիբերման, Ի. Մանցել, Վ. Բելկ, Դ. Լեման և այլոք:

Գերմանացի երիտասարդ էքսպրեսիոնիստ պոետ Արմին Թեոֆիլ Վեզները (1886-1978), ականատեսը լինելով արևմտահայության նկատմամբ թուրքական իշխանությունների կողմից իրականացված ոճրագործություններին, առաջիններից էր, ով հանդես եկավ Միջագետքի անապատներում իրականացված հրեշավոր գործողությունների դատապարտմամբ: Դրա հավաստի վավերագրերը եղան Ա. Վեզների՝ 1915-1916 թթ. (այդ ժամանակ նա աշխատում էր Թուրքիայում՝ գերմանական ռազմական միսիայի սանիտարական ծառայությունում) օրագրային գրառումներն ու հարազատներին ուղարկված նամակները:

Հայ ժողովրդի հանդեպ իրականացված բարբարոսական խոշտանգումների մասին Վեզները դեռ վաղուց գիտեր: 1896թ., դեռ դպրոցական, Արմինը «Բեռլիներ Ցայթունգե»-ում կարդում է իրեն անծանոթ հեռավոր «Հայաստան» երկրում հայերի կոտորածների մասին: Թերթում տպագրված խոշորատառ «Գազանային հաշվեհարդար հայերի հետ Թուրքիայում» վերնագրով հոդվածը հայտնում էր այն մասին, թե ինչպես են սուլթան Աբդուլ Համիդի հրոսակախմբերը քաղաքներից և գյուղերից արտաքսել 10000-ի հասնող մարդկանց, կողոպտել և ոչնչացրել նրանց, հարձակվել կանանց բաղնիքի վրա, եկեղեցում փակել և հրկիզել մի ամբողջ համայնք:

Ի. Գետտեի խոսքերը, թե «նամակները պատկանում են այն նշանակալի հուշարձանների թվին, որ թողնում է մարդը...» [1], ավելի քան ճշմարիտ է Ա. Վեզների պարագայում: Հարազատներին ուղարկած նրա նամակները ճշմարտացիորեն արտացոլում էին թուրքական կառավարության վարած հայահալած քաղաքականությունը:

* Հոդվածն ընդունվել է 03.03.2015:

Հոդվածը տպագրության է երաշխավորել բ.գ.դ., պրոֆեսոր Ս.Խանյանը:

Վեգների՝ 1915-1916թթ. գրված նամակների մի մասը տպագրվել էր դեռևս պատերազմի տարիներին, որի համար հեղինակը 1917թ. արտաքսվել էր Կոստանդնուպոլսից: Ամբողջ նամականին առանձին գրքով հրատարակվել է 1919-ին՝ «Ճանապարհի առանց տունդարձի (նահատակություն նամակներում)» խորագրով: Գրքի պատմագրական արժեքն այն չէ միայն, որ արևմտահայության նկատմամբ թուրքական իշխանությունների կողմից իրականացված ոճրագործությունների հավաստի վկայություն է՝ գրված իրադատությունների անմիջական տպավորությամբ, այլև այն, որ հեղինակը բացահայտել է հայ և թուրք ժողովուրդների հոգեբանությունն ինչպես խաղաղ, այնպես էլ պատերազմական պայմաններում: «Վեգների նամակներն ընթերցվում են իբրև աղետներով նշանավորված դարում մարդկային բարդ ճակատագրերի մասին դրամատիզմով լցված պատմվածքներ»[2], - գրում է Ե. Եֆրեմենկոն:

Այս նամակները պատմում են մահվան մասին... և տողերով բացվող գրքում գերմանական բանակի նախկին սպան գրում է. «Տեղի ունեցան այնպիսի իրադարձություններ, որ նույնիսկ ամաչում ես դրանց ականատեսը լինելու համար: Տարբեր նահանգներում սպանվել են հազարավոր հայեր՝ տղամարդիկ, կանայք, ծերեր, երեխաներ... Հղի կանանց դուրս էին հանում տներից և ծեծում մինչև կենդանության նշանների անհետացումը..., երիտասարդ աղջիկներին տալիս էին իշխանավորներին՝ չամաչելով առաջարկել անգամ գերմանացի սպաներին... Եփրատում լողացող հազարավոր դիակներ կարելի էր տեսնել... Հայերի անհամար խմբեր քշվել էին անմարդաբնակ վայրեր. մշտապես տղամարդկանց քշում էին մի ուղղությամբ, կանանց՝ մյուս՝ առանց սննդի՝ քրդական վայրագ ցեղերին դեմ հանդիման»[3]:

Իր նամակներում ճնշված ժողովուրդների ինքնորոշման իրավունքի պաշտպանը, նկարագրելով առաջին աշխարհամարտի արհավիրքները, գրում է. «Լեռնային բոլոր հովիտներն ու բոլոր գետերի ափերը լիքն են վշտի ճամբարներով: Տավրոսի... անցումներով հոսում է աքսորված քաղաքի այդ անվերահսկելի հոսքը, հարյուր հազարավոր անիծվածների հոսքն իրեն լեռան ստորոտներն է գարկում, անհամար շարքերը, ավելի ու ավելի ստվարանալով, տարրալուծվում էին դաշտերում, աներևութանում անապատներում: Որտե՞ղ: Որտե՞ղ: Ահա սա է ճանապարհն առանց տունդարձի»[4]:

1919 թ. Վեգները հրապարակում է ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնին ուղղված իր հայտնի «Բաց նամակ...»-ը, որում, որպես մեկը սակավաթիվ այն եվրոպացիներց, որոնք «սկզբից ևեթ ականատես են եղել Անատոլիայի ծաղկուն քաղաքներում, բերքաշատ դաշտերում հայ ժողովրդի զարհուրելի բնաջնջմանը և Եփրատի ափերին, Միջագետքի անապատի քարքարոտ ավազուտներում նրա խղճուկ մնացորդների ոչնչացմանը»[5], ներկայացնում է «թշվառության և սարսափների» այն զարհուրելի տեսարանները, որոնք տեսել է սեփական աչքերով. «Ես տեսել եմ խելագարվածների, որոնք ուտում էին իրենց մարմնի խորխոր, կանանց, որոնք եփում էին իրենց նորածինների մարմինները, աղջիկների, որոնք կտրատում էին իրենց մայրերի տաք մարմինները, որպեսզի նրանում գտնեն այն ոսկին, որ կուլ էին տվել ավազակ ժանդարմների սարսափներից»[6]:

Մարդկային բանականության թելադրանքով և ազնիվ խոստումների պարտականությամբ հումանիստ գրողը բարձրացնում է փրկվածներին բարոյական և նյութական աջակցություն տրամադրելու հարցը, պահանջում հազարավոր բռնի մահմեդականացված հայ կանանց և երեխաների դարձը քրիստոնեական հավատքի, նրանց վերադարձը հայրենիք, ինչպես նաև կորցրած գույքի փոխհատուցում: Այս առումով Վեգների հրապարակախոսությունը «գրողի և աշխարհի ու ժամանակի տագնապների միջև

եղած կապերի դրսևորման և ժողովրդի վրա ունեցած բարոյական ազդեցության միջոց էր»[7]:

Ըստ էության ընկալելով հայ ժողովրդի տանջահար հոգին, նրա չլսված տառապանքները, դառը կշամբանքով դիմելով Վ. Վիլսոնին՝ Վեզները կոչ է անում փրկել Եվրոպայի պատիվը և օգնություն ցույց տալ «բարձր մշակույթի տեր, հարուստ և փառավոր անցյալով, արվեստի, գրականության, գիտության ասպարեզում անանց ծառայություններով, ականավոր ու տաղանդավոր, խոր կրոնականությամբ, վսեմ բարեպաշտությամբ մարդկանցով հարուստ» քրիստոնյա ժողովրդին:

1922թ. «Նոր սերունդ» հատուկ թողարկման ամսագրում հրատարակված «Ճիչ Արարատից» հոդվածը գրողի՝ Իզմիրում հայերի նկատմամբ իրականացված հերթական ոճիրի արձագանքն էր, որը ոչ այլ ինչ է, քան Առաջին համաշխարհային պատերազմում հաղթանակած երկրների քաղաքական և դիվանագիտական խարդավանքների կատարյալ մերկացում:

«Ի՞նչ արեցին Արևմուտքի հաղթանակած տերություններն իր հավատի և հոգու համար տանջահարված այդ փոքր ժողովրդին բնաջնջումից փրկելու համար... Բրիտան, Ղեշանե՛լ, Օրլանդո՛, Սոնիյո՛, Վիլսո՛ն՝ այնքան շատ են մեծահամբավ անունները, որոնք շքերթի պաշտոնական համազգեստների նման անցնում են մեր կողքով՝ իրենց հետևից թողնելով հիասթափության դատարկ հռիռոցի արձագանքը»[8], Վեզները խարազանում է արևմտյան տերությունների հանցավոր անտարբերությունը:

Եթե փոխելու լինենք քաղաքական այն գործիչների անունները, որոնց դիմում է Ա. Վեզները, ապա ականալից կհանգենք այն եզրակացության, որ 20-րդ դարի սկզբներից քիչ բան է փոխվել, և նախորդ հարյուրամյակում քիչ չէին դեպքերը, երբ ժողովուրդների ցեղասպանությունը կիրառվել է քաղաքական և նեղ ազգայնական խնդիրների լուծման համար, իսկ այժմ արդեն այլ ցեղերի նկատմամբ՝ զորեղ աշխարհի լիակատար թողտվությամբ և կամ անգոր ճիչերի ուղեկցությամբ:

Ա. Վեզների հիշյալ հոդվածից քաղված «Սպանվողների ճիչը թանձր խավարի միջով հասնում է եվրոպական գիշերվա լռությանը, և այս ամենն ուղեկցվում է այն պահի խոր լռությամբ, որ ավելի սարսափելի է, քան դրան նախորդող ճիչը» նախադասությունը մեծագույն ապտակ է այն «բարոյականությանը», որն անբարո շահարկում է տերմիններ, որպեսզի բարոյական երևա ինքն իր և համայն մարդկության աչքում: Տեղին է նշել պատմաբան Զ. Գաբրիելյանի խոսքերը, թե «եվրոպական տերությունները ուրիշ ոչ մի հայելու մեջ այնքան լավ չեն տեսնի իրենց իրական արտացոլումը, որքան հայ ժողովրդի ողբերգության մեջ»[9]:

«Ներխուժում կանանց բաղնիք» պատմվածքում (1917թ.) հեղինակը նկարագրում է տեսարաններ ու մանրամասներ հայ ժողովրդի նկատմամբ իրականացված կոտորածներից: Ընթերցողը տեսնում է, թե ինչպես է թուրքական մուլագար խուժանը ներխուժում կանանց բաղնիք և հագուրդ տալիս իր անասնական ցանկություններին, ինչպես են մայրերի աչքի առաջ խեղդամահ արվում մանուկներ, հայրերի ներկայությամբ բռնաբարվում դեռատի աղջիկներ, ամորձատվում պատանիներ, մորթվում հղի կանայք, մորթագերծվում ծերեր: «Նրանք ճշում էին ցավից և նրանց արյան մերկ անոթները գոլորշի էին արձակում սառը օդում... Տնքում էին, ցավի ահագնությունից ուշագնաց լինում...»[10]:

Պատմվածքում գործողությունները ծավալվում և զարգանում են հայ կնոջ և թուրք նահանգապետի որդու (Սրբուհու և Լյուբֆիի) շուրջ: Սրբուհու հանդեպ տաժաժ գզացմունքը անհաստատ Լյուբֆիին դարձնում է ինքնավստահ և նա, փրկելով Սրբուհու կյանքը, հասնում է նրան:

Էքսպրեսիվոնիզմին բնորոշ վերջաբան է սակայն ընտրել Վեգները պատմվածքի համար: Սարսափազդու տեսարաններից հետո հեղինակը միավորում է հայուհուն ու նրա «փրկչին»՝ թուրքին, ինչն այնքան էլ իրատեսական չէ այն պարզ և ճշմարիտ պատճառով, որ դժվար թե հայ կինը կարողանար երջանկություն գտնել ամուսնուն ու մանկանը սպանած մեկի, և հատկապես՝ թուրքի գրկում:

1921թ. Բեռլինում կայացած դատավարության ժամանակ հայ ժողովրդի մեծ բարեկամ Վեգները հանդես եկավ որպես ականատես և վկա՝ ցուցադրելով հայկական կոտորածների լուսանկարները, որ արվել էին իր կողմից:

Հայերի տեղահանության և կոտորածների համառոտ նկարագրություն է Վեգների «Դատավարություն Թալէաթ-փաշայի»-ն: Սղագրության առաջաբանում հեղինակն ապացուցում է երիտթուրքական ուժերի կողմից կազմակերպված և իրագործված ցեղասպանության փաստը: Դատավարությունների պատմության մեջ առաջին անգամ մեղադրյալի տեղում սպանվածն էր, գլխավոր մեղադրողը՝ սպանողը: Եվ դատն այդ արդարացիորեն պատմության մեջ մտավ որպես Թալէաթ փաշայի, այլ ոչ՝ Ս. Թեխլերյանի դատավարություն. «Իրադարձությունների զարմանալի հորձանուտում տեղի ունեցավ այն, որ փաստացի ժանրության տակ տառապող ու լռակյաց զոհը ակամայից դարձավ մեղադրող և մեղադրյալի աթոռին այլևս չկա Սողոմոն Թեխլերյան, այլ կա արյունաշաղախ ննջեցյալի ստվերը, խորհրդավոր իրավիճակի այնպիսի խորինաստ հաստատում, երբ մեղավորը ոչ թե սպանողն է, այլ՝ սպանվածը»[11]:

Վեգները, բացառելով հայերի տեղահանության վարկածը, անհիմն է համարում թուրքական կողմի բոլոր պատճառաբանություններն ու ներկայացնում փաստեր, որոնք ապացուցում էին ցեղասպանության նախօրոք ծրագրված լինելը «Իթթիհատ վե Թերաքքի» կազմակերպության կողմից:

ԵՊՀ պրոֆեսոր Ս. Ստեփանյանը 1970թ. նամակ է հղում Վեգներին՝ հայերի ցեղասպանության մասին իր ունեցած վավերագրերի տրամադրման խնդրանքով, որին ի պատասխան ստանում է ձեռագիր և տպագիր փաստաթղթերի (դրանց մի մասը, համաձայն նամակի, վաղուց նվիրել էր Արտասահմանի հետ մշակութային կապերի հայկական ընկերությանը) թվարկմամբ բովանդակալից գրություն: Վեգների տրամադրած ցանկը ներառում էր նաև այնպիսի գործեր, ինչպիսիք են «Կրակե գունդ» հոդվածը, որտեղ նկարագրված են հեղինակի ապրումները՝ հայերի նկատմամբ Աբդուլ Համիդի կատարած ուժերի ժամանակ, հայ մոր ձակատագրի մասին պատմող «Հայ մորը» պատմվածքը, «Պատանի Հուսեյնը» նովելաշարը:

Ա. Վեգները Հայաստան կատարած իր առաջին այցելության (1927թ.) մասին գրել է. «Եկա Հայաստան՝ ականատես լինելու մի ժողովրդի հարությանը, այո՛, հարությանը...»[12], իսկ արդեն երկրորդ այցելության ժամանակ, վերհիշելով դարի առաջին ողբերգության մասին, «նա գվարձանում էր՝ տեսնելով հնադարյան Երևանի նորակառույցները»: Հետագայում նա պիտի գրեր. «Ես, որ տեսել եմ այս ժողովրդի ջարդերը, ես, որ ծայնս բարձրացրել եմ հանուն այս ժողովրդի և տեսնելով աշխարհի քար ժողովրդի պապանձվելը, անիծում էի ամբողջ աշխարհին, եկա, տեսա վերածնված հայ ժողովրդին, բարձրացա Ծիծեռնակաբերդ, ծնկի եկա անգերեզման հայերի հավիտենական կոթողի առջև ու խոնարհվեցի նահատակների հոգին խորհրդանշող անմար կրակի առջև... Այստեղ հայությունը փրկված է վերջնականապես, մեկընդմիջտ: Երբ դիմացն Արարատն է և Ծիծեռնակաբերդի վրա անցյալը հիշեցնող մշտավառ բոցը, հայն այստեղ է և իր ձակատագրի տերն է» [13]:

Հունանիստ գրողի գրական ժառանգությունը շարունակում է արդիական մնալ և դա այն պարզ պատճառով, որ այսօր՝ հայ ժողովրդի նկատմամբ իրականացված ե-

ղեռնի 100-րդ տարեիցին, քաղաքական շահարկումների առարկա են ոչ թե փրկվածներին միջազգային հանրության հովանու ներքո պատմական հայրենիք վերադարձնելու նախկինում արված փորձերը, այլև՝ հայ ժողովրդի ցեղասպանության ճանաչումն ու հատուցումը:

ՇԱՆՈՅԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Гуляев Н. А., Шибанов И. П., Буняев В. С., Лопырев Н. Т., Мандель Е. М., История немецкой литературы, источник: www.19v-euro-lit.niv.ru
2. Филологические науки. Вопросы теории и практики (журнал), 2013. № 1 (19), источник: www.gramota.net
3. Վեգներ Ա., Ճանապարհի առանց տունդարձի (նահատակություն նամակներում), Եր., ՀՀ ԳԱԱ, 2000, էջ 23:
4. Козбарева Л. В., Опыт анализа сатирического произведения на лекциях и практических заданиях по зарубежной литературе, Свердловск, 1979, стр. 79.
5. Ստեփանյան Ս., Ա. Վեգները և Է. Վերները հայոց ցեղասպանության մասին, Երևան, ԱԳՀՈՒԿ, 1996, էջ 22:
6. Նույն տեղում, էջ 26:
7. Арустамян М., Тема армянского геноцида в немецкой и австрийской литературах, Степанакерт, 2013, стр. 33.
8. Wegner A., Der Scheri vom Ararat, Leipzig, 1992, s. 2.
9. Габриелян З., Геноцид армян в Западной Армении 1895-1922 гг.: история и современность, источник: www.starovoitova.ru
10. Арустамян М., Тема армянского геноцида в немецкой и австрийской литературах, стр. 59.
11. Վեգներ Ա., Դատավարութիւն Թալէաթ-փաշայի, տես՝ <http://www.armenianhouse.org>
12. Ստեփանյան Ս., Ա. Վեգները և Է. Վերները հայոց ցեղասպանության մասին, էջ 6:
13. «Լրաբեր», Արմին Վեգների ծայնը, 31 հունվարի, 1970:

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Արմին Վեգները՝ հայոց ցեղասպանության ականատես Անուշ Դուլխանյան

Արևմտահայության նկատմամբ թուրքական իշխանությունների կողմից իրականացված ոճրագործությունների ականատեսներից գերմանացի նշանավոր գրող, հրապարակախոս Ա.Թ.Վեգները առաջիններից էր, ով դատապարտեց հրեշավոր այդ գործողությունները՝ հատուցում պահանջելով անտարբեր աշխարհից: Բնորոշ են Վեգների «Ճանապարհի առանց տունդարձի (նահատակություն նամակներում)» գիրքը, «Ճիչ Արարատից» հոդվածը, «Ներխուժում կանանց բաղնիք» պատմվածքը, ինչպես նաև «Բաց նամակ...»-ը՝ ուղղված ԱՄՆ նախագահ Վ.Վիլսոնին, որոնցում հեղինակը նկարագրում է հայ ժողովրդի կրած տառապանքները և փորձում դրանք հասու դարձնել ժամանակի գերտերություններին:

Բանալի բառեր՝ Ա. Վեգներ, ցեղասպանություն, Արարատ, Ծիծերնակաբերդ, նաճականի, հանցագործություն, տեղահանություն, բռնություն, հումանիզմ, Վ. Վիլսոն, նահատակություն, Եվրոպա, Թուրքիա, դատավարություն, ճանաչում, հատուցում:

РЕЗЮМЕ

Армин Вегнер как свидетель армянского геноцида

Ануш Долуханян

А.Вегнер – немецкий писатель и публицист – будучи Свидетелем преступлений, совершенных турецкими властями в отношении жителей Западной Армении, был одним из первых, кто осудил те ужасные действия, требуя компенсацию от владельцев равнодушного мира. В книге "Дорога без возврата (мученичество в письмах)", статье "Крик с Арарата", рассказе "Вторжение на женскую баню", а также "Открытом письме...", направленном президенту США В.Вильсону, автор описывает страдания армянского народа, пытаясь все это довести до сверхдержав.

Ключевые слова: А. Вегнер, геноцид, Арарат, Цицернакаберд (мемориал, посвященный армянскому геноциду), письма, преступность, перемещения, насилия, гуманизм, В. Уилсон, мученичество, Европа, Турция, судебный процесс, признание и компенсация.

SUMMARY

Armin Wegner as an eyewitness to the Armenian Genocide

Anush Dolukhanyan

German writer and publicist A.Wegner, a witness to crimes committed by the Turkish authorities against the population of Western Armenia, was one of the first people to condemn those horrible acts and to demand compensation from the indifferent world and "the mighty of this world". His typical publications "The road of no return (martyrdom in letters)", "A cry from Ararat", "The impulsion into women's bath", as well as "Open Letter" addressed to US President W.Wilson, describe the suffering of the Armenians and make an attempt to bring the issue integrally to the attention of superpowers.

Keywords: A. Wegner, genocide, Ararat, Tsitsernakaberd (memorial dedicated to the Armenian Genocide), letters, crime, displacement, violence, humanism, V. Wilson, martyrdom, Europe, crime, recognition, Turkey, trial, compensation